ՀՀ կառավարության 12.08.2008թ.-ի թիվ 706Ն որոշում

2009-09-17

Ուղղված է՝ ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերին

Առարկան՝ ՀՀ կառավարության 12.08.2008թ.-ի թիվ 706Ն որոշում

Հարգելի՛ պարոնայք,

ՀՀ կառավարության 12.08.2008թ.-ի թիվ 706 Ն որոշմամբ նախատեսված է Գեղարքունիքի և Շիրակի մարզերի համեմատաբար աղքատ 60 համայնքներում գյուղատնտեսական *փոքր վարկերի տոկոսների սուբսիդավորում՝ ՀՀ կառավարության կողմից:* ՀՀ կառավարության նշված որոշման նպատակն է գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարողների վարկավորման մատչելիության բարձրացումը, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնել ոլորտի մրցունակությունը, նպաստել գյուղական համայնքների ամրապնդմանը, հատկապես սահմանամերձ, լեռնային, բարձր լեռնային գոտում, և արդյունքում՝ *բարելավել գյուղական բնակչության կենսապայմաններն ու կյանքի որակը:*

Կից Ձեզ ենք ներկայացնում ՀՀ կառավարության վերը նշված որոշումը և առաջարկում ենք Հայաստանի բանկերի միություն *(ՀԲՄ)* ներկայացնել նշված որոշման կիրառման արդյունքում բանկերի մոտ առաջացող հնարավոր խնդիրները և դրանց լուծման հնարավոր առաջարկությունները՝ *ՀԲՄ-ի* կողմից ամփոփված խնդիրներն ու առաջարկությունները հետագայում ՀՀ ԿԲ ներկայացնելու նպատակով:

Կից՝ 13 էջ

Ֆինանսական համակարգի քաղաքականության և ֆինանսական կայունության վարչության պետ՝ Վահե Վարդանյան

Սույն գրության հետ կապված հարցերով կարող եք դիմել
Ֆինանսական համակարգի քաղաքականության և ֆինանսական կայունության վարչություն

Նոնա Ավետիսյանին